ՀՏԴ 721.012:749.1(395.5)

Հ.Հ. ՀՄԱՅԱԿՅԱՆ, Տ.Տ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԱՀՈՒՅՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՆՏԵՐԻԵՐՈՒՄ ՎԵՐՋԻՆԻՍ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով ուրարտական կահույքի վերաբերյալ գիտական հրապարակումները և պատկերագրական որոշ նյութերը՝ ներկայացվում են ուրարտական կահույքի առանձնահատկությունները, հիմնական տեսակները, պատրաստման համար կիրառվող նյութերը, ստեղծման տեխնիկական առանձնահատկությունները: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվում են ուրարտական կահույքի կիրառության հնարավոր տարբերակներ ժամանակակից ինտերերում:

Առանցքային բառեր. կահույքագործություն, փայտամշակություն, ուրարտական, արհեստներ, աթոռակ, թախտ:

Ներածություն: Ուրարտական տերությունը ստեղծվել և գոյատևել է Հայկական լեռնաշխարհում Ք.ա. 9-6-րդ դարերում՝ դառնալով Հին Աշխարհի հզորագույն պետություններից մեկը: Ուրարտական պետությունը զարգացած տնտեսություն, մշակույթ և արհեստագործություն ուներ: Գրավոր սեպագիր աղբյուրներում պահպանվել են տարբեր վկայություններ արհեստագործական մի շարք ճյուղերի պատկանող արհեստների և արհեստավորների մասին [1]:

Ուրարտական կահույքի վերաբերյալ որևէ գրավոր վկայություն չի պահպանվել, սակայն Սարգոն Երկրորդի կողմից ուրարտացիներից վերցված ավարի ցանկում հիշատակվում են փղոսկրի և արծաթի համադրությամբ մահճակալներ, աթոռներ ու սեղաններ, տարբեր գահեր, ինչպես նաև փայտա կահույք՝ հարդարված արծաթով և ոսկով: Սակայն հետաքրքրական է, որ այստեղ չի հիշատակվում բրոնզի կիրառություն կահույքում, մինչդեռ հնագիտական գտածոներում այն բազմակի կիրառվում է կահույքում [2]:

Բացի այդ, ուրարտական հարուստ պատկերագրական նյութը և հնագիտական գտածոները վկայում են գրավոր աղբյուրներում չհիշատակված ձեռարվեստի և արհեստների այլ տեսակների առկայության մասին: Ուրարտական կահույքի մասին կարելի է պատկերացում կազմել հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերված կահույքների մասերից, (մասնավորապես՝ Ալթինթեփեի, Ադյջևազի, Թոփրակ Կալեի, Կարմիր Բլուրի և այլն) [3], բրոնզյա բազմաոճ իրերի պատկե-

րագրության մեջ առկա տարբեր կահույքների պատկերներից: Հետաքրքրական են Ադլջևազի պեղումներից հայտնաբերված փայտե սեղանները, որոնց ոտքերը հարդարված են եղել կենդանական վերջույթներով, ցլերի կճղակներով և այլն [4]:

Վերոնշյալ նյութերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ ուրարտական ժամանակաշրջանում հիմնականում կիրառվել են եռոտանի կլոր սեղաններ, խաչաձև ոտքերով փոքր սեղաններ, տարբեր աթոռակներ և աթոռներ, բարձր թիկնակով թախտեր և մահճակալներ [3]: Իհարկե, ուրարտական կահույքի նմուշներից ամենակարևորներից է Ռուսախինիլիից (Թոփրակ Կալե) հայտնաբերված գահը, որը պարունակում է նաև բրոնզյա մի շարք կենդանակերպ ֆիգուրներ [4]:

Կահույքը հիմնականում եղել է միաձույլ և մի քանի նյութերի միաձուլումից ստեղծված: Կահույքի ոտքերը սովորաբար մետաղից էին պատրաստում, դրանք ունեին կենդանական վերջույթներ՝ ցլի և առյուծի ոտքերի տեսքով [5]: Կահույքի մեջ մետաղյա տարրերն օգտագործում էին ոչ միայն ամրության, այլ նաև դեկորատիվ նպատակով: Ուրարտուում մեծ զարգացման է հասնում նաև փայտամշակությունը, որը, բնականաբար, կիրառվում էր նաև կահույքագործության բնագավառում:

Մեր նպատակն է, ուսումնասիրելով ուրարտական կահույքի վերաբերյալ գիտական հրապարակումները և պատկերագրական նյութերը, ներկայացնել ուրարտական կահույքի առանձնահատկությունները, հիմնական տեսակները, պատրաստման համար կիրառվող նյութերը, ստեղծման տեխնիկական առանձնահատկությունները և կատարված ուսումնասիրությունների արդյունքում առաջարկել ուրարտական կահույքի կիրառության հնարավոր տարբերակներ ժամանակակից ինտերերում:

Ներկայացվում են ուրարտական ժամանակաշրջանում կիրառված կահույքի զարդանախշման առանձնահատկությունները, նյութերը, որոնցից պատրաստված են եղել դրանք, և այդ ամենի հիման վրա կատարվում են էսքիզային առաջարկներ:

Խնդրի դրվածքը և հիմնավորումը: ***Մետաղագործությունը*** Ուրարտական ժամանակաշրջանի ամենազարգացած ուղղություններից մեկն էր: Այն կարևորագույն դեր ուներ կահույքագործության մեջ: Բացի այդ, մետաղյա տարբեր իրերի վրա առկա պատկերագրությունը ևս հնարավորություն է ընձեռում՝ պատկերացում կազմելու ուրարտական կահույքի տեսակների մասին: Զարգացած մետաղագործական մշակույթի մասին են վկայում մետաղից ձուլված հնագիտական բազմաթիվ գտածոները. բրոնզյա զենքերն ու գործիքները, ոսկերչական նմուշները, բրոնզյա գոտիները, ձիերի ամրագոտիները, վահանները,

սաղավարտները, զենքերը, աղեղները, կահույքի մասերը և այլն, որոնք ի ցույց են դնում ուրարտացիների բարձր զարգացած գեղագիտական ընկալումները, ինչպես նաև մետաղամշակման զանազան ու բարդ տեխնիկաներին տիրապետելու մեծ վարպետությունը [6] (*հավելված, նկ. 1, 2*):

Այս բարձրարվեստ նմուշներն իրենց հարուստ գեղազարդման համակարգով հնարավորություն են տալիս նաև՝ պատկերացում կազմելու Ուրարտուի սոցիալ-մշակութային, կրոնական և տնտեսական կյանքի մասին:

Ուրարտական մշակույթի ամենաուշագրավ նմուշներից են ուրարտական գոտիները, որոնք ազդեցիկ տպավորություն են գործում իրենց գեղազարդման հարստությամբ, փառահեղությամբ [7]: Ուրարտական բրոնզե գոտիների գեղարվեստական անզուգական որակը և բարձրարվեստ ու բացառիկ պատկերագրությունը ամենաճանաչված են ուրարտական հնագիտական գտածոների շարքում (*հավելված, նկ. 3, 4, 5*): Այդ իսկ պատճառով ուրարտական բրոնզե գոտիները համարվում են չափազանց արժեքավոր պատմահնագիտական աղբյուրներ ուրարտական պատմության ու մշակույթի ուսումնասիրման գործում: Դրանց զարդանախշային ուրույն լուծումներում զարմանահրաշ կերպով արտացոլվում են ուրարտացիների կրոնածիսական ընկալումների և պաշտամունքային հավատալիքների բարդ, բայց կանոնակարգված համակարգերը, որոնց հիմքում ուրարտական կրոնն էր: Ընդհանրապես ուրարտական մետաղագործության բնագավառում մեծ տարածում եր գտել ծիսական ընծայաբերության և զոհաբերության սյուժեն [1]: Ուրարտական գոտիների արժքավոր դերը զգալի է նաև կահույքի ուսումնասիրության գործում: Ուրարտացիների հավատալիքային համակարգն իր արտացոլումն է գտել ուրարտացի վարպետների բրոնզե գոտիների վրա զանազան կրոնական-ծիսական կարևոր տարրերի պատկերման մեջ՝ վայրի և առասպելաբանական կենդանիների, մարդկային կերպարների և աստվածային էակների պատկերների ընդգրկմամբ, ինչպես նաև դրանցում կարևոր տեղ էին զբաղեցնում բուսական տարրերը, զարդանախշերը՝ կենաց ծառը, արեգակնային սկավառակը, աստղակերպ և ծիսական սիմվոլները, այլազան երկրաչափական մարմիններ և այլն [7]:

Ուրարտական գոտիների պատկերագրության մեջ բուսական և զարդանախշային տարրերի պատկերման համակարգված բնույթը կազմում է մի յուրահատուկ համակարգ: Այդ մոտիվների հորինվածքային առանձնահատկությունները, բացի գեղագիտական արժեքից, ունեին նաև սիմվոլիկ-խորհրդապաշտական իմաստ, որը դրսևորվում էր պատկերագրական առանձնահատկությունների կամ կանոնների, համաչափությունների պահպանմամբ, որոնք արտացոլում էին բնության և տիեզերքի համաչափությունն ու ներդաշնակությունը: Դրանց

պատկերագրությունների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում, ինչպես նշվեց, կարելի է պատկերացում կազմել նաև այդ ժամանակահատվածում տարբեր տիպի կահույքների կիրառության ձևերի, առանձնահատկությունների մասին: Ուրարտական գոտիների պատկերազարդման առանձնահատկությունները կարելի է կիրառել նաև ժամանակակից ինտերիերի տարաբնույթ իրերի պատրաստման ժամանակ՝ պայմանով, որ վերոնշյալ բազմաշերտ կրոնամշակութային և գեղագիտական ընկալումները հաշվի առնվեն ուրարտական ոճի կահույքի կամ ինտերիերի այլ բաղկացուցիչների ստեղծման կամ էսքիզավորման դեպքում:

Փայտամշակումը ևս տարածված արհեստներից է եղել ուրարտական ժամանակաշրջանում: Փայտը մեծ կիրառություն ուներ ուրարտացիների շրջանում. այն օգտագործում էին ճարտարապետության, կահույքագործության, զինագործության, դեկորատիվ կիրառական իրերի պատրաստման, փոխադրամիջոցների արտադրության մեջ: Պեղումների արդյունքում հայտնաբերված կահույքի որոշ բեկորներ փաստում են, որ մետաղի և փայտի միասնական կիրառությունը ոչ միայն դեկորատիվ բնույթ է կրել, այլև կոնստրուկտիվ՝ նպաստելով կահույքի ամրությանը:

Զուգահեռներ ուրարտական և ասորեստանյան կահույքների միջև: Ուրարտական հնագիտական գտածոներում և պատկերագրության մեջ առկա կահույքի հետ կարելի է զուգահեռներ տեսնել, օրինակ, Ասորեստանի մշակույթում: Ուրարտական և ասորեստանյան գահերի համեմատական վերլուծությունը մեծապես պատկերացում է տալիս այս մշակույթների միջև եղած որոշակի նմանությունների և տարբերությունների մասին: Ըստ ուսումնասիրողների՝ որոշ դեպքերում դժվար է գտնել դրանց տարբերությունները, այդուհանդերձ, գեղազարդման մի շարք տարրեր հատուկ են հենց ուրարտական տիպին [5] (*հավելված, նկ. 6, 7*):

Բացի զանազան ֆիգուրներով հարդարված գահերից, առկա է կահույքի մեկ այլ տեսակ, որը կարող է լինել բնիկ ուրարտական: Դրանք, այսպես կոչված, «մոմակալներ» են, որոնցից վեցը հայտնաբերվել են պեղումների արդյունքում: Խոսքը երեք ոտքերի վրա կանգնեցված աշտանակ-մոմակալի մասին է, որի վրա դրվում է սպասքը: Ոտքերն ավարտվում են կենդանիների վերջույթների քանդակներով, իսկ հիմքը զարդարված է արմավենու տերևների պատկերներով [5] (*հավելված, նկ. 8, 9*): Այս ինքնատիպ և նրբաոճ մոմակալները կարելի է նորովի մոտեցմամբ կիրառել ժամանակակից ինտերիերում ևս:

Հետազոտության արդյունքները: Ժամանակակից ինտերիերում ուրարտական կահույքի կիրառման հնարավոր տարբերակների առաջարկ: Նյութերի

ուսումնասիրությունների արդյունքում կարելի է առաջարկել ուրարտական կահույքի՝ ժամանակակից ինտերիերում կիրառման հնարավոր մի քանի տարբերակներ: Կարելի է կիրառել ոչ միայն ձևերը և նյութերը, այլ նաև նորացված տեխնոլոգիաներով դրանց զարդանախշման և մշակման տեխնիկաները: Առաջարկում ենք կիրառել փայտի և մետաղի միաձուլման տեխնիկայով աթոռներ, աթոռակներ պատրաստելու ուրարտական ժամանակաշրջանի որոշակի առանձնահատկությունները՝ հագեցնելով դրանք ուրարտական զարդանախշային մոտիվների կիրառմամբ: Օրինակ՝ փայտյա աթոռներ՝ մետաղյա ոտքերով, որոնք պատկերազարդված են ուրարտականին բնորոշ զարդանախշերով՝ թե՛ կենդանական և թե՛ բուսական: Այս տեխնիկան կարելի է կիրառել նաև սեղանիկներ, եռաոտ աթոռակներ պատրաստելիս: Զարդանախշման առանձնահատկությունները և վերջիններիս սիմվոլիկ իմաստները, հորինվածքային առանձնահատկությունները կարելի է կիրառել ժամանակակից ինտերիերի հարդարանքի մաս հանդիսացող տարբեր կահույքների զարդանախշման ժամանակ:

Եզրակացություն: Ուրարտական ժամանակաշրջանի կահույքի մասին հիմնականում պատկերացում կարելի է կազմել պեղումների արդյունքում հայտնաբերված կահույքի տարբեր մասերի մնացորդների, հնագիտական այլ գտածոների, այդ թվում՝ բրոնզյա գոտիների և դրանց պատկերագրությունների ուսումնասիրության արդյունքում:

Վերոնշյալ նյութերի ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ ուրարտական կահույքը հիմնականում պատրաստված է եղել մետաղից և փայտից: Ուրարտուում հիմնականում կիրառվել են եռոտանի կլոր սեղաններ, խաչաձև ոտքերով փոքր սեղանիկեր, տարբեր աթոռակներ և աթոռներ, թախտեր, գահեր և մահճակալներ: Ուրարտական կահույքին բնորոշ էին նաև մետաղյա կենդանակերպ վերջույթներով և մետաղյա մանրաքանդակներով հարդարումները:

Ուրարտական կահույքը որոշ զուգահեռներ հանդես բերելով այլ հինարևելյան մշակույթներում առկա կահույքի տեսակների հետ, այդուհանդերձ աչքի է ընկնում նաև որոշակի առանձնահատկություններով և ուրույն գծերով:

Կարելի է եզրակացնել նաև, որ ուրարտական կահույքի առանձնահատկությունները՝ թե՛ ձևերի և թե՛ նյութերի առումով, կարելի է վերաիմաստավորված և նորովի կերպով կիրառել ժամանակակից կահույքի արտադրության մեջ՝ փորձելով պահպանել գեղազարդման հորինվածքային և սիմվոլիկ իմաստները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Պողոսյան Գ**. Պատկերագրական առանձնահատկությունները Վանի թագավորության կերպարվեստում.-Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2004.- 164 էջ:
2. **Çavuşoğlu R., Gökce B. and Kenan I.** The Craftsmen and Manufacturers in the Urartian Civilization // Anatolica.- 2014.-40.- P. 23-45.
3. **Çifçi A.** Interpretations of the Socio-Economic Structure of the Urartian Kingdom// Submitted in partial fulfillment of the requirement for the degree of Doctor of Philosophy. -Liverpool, April 2014.- P. 149-150.
4. **Simpson E**. Furniture in Ancient Western Asia //Civilizations of the Ancient Near East.- New York, 1995. - Vol. 3. - P. 1647-1671.
5. **Curtis J.** Assyrian and Urartian Metalwork // Independence or Interdependence / S. Kroll, C. Gruber, U. Hellwag, M. Roaf and P. Zimansky (eds).- Biainili-Urartu, Leuven, 2012. -P. 427-443.
6. **Dezső T., Niederreiter Z., Bodnár C.** Urartian Bronzes. A Preliminary Report on a Looted Hoard of Urartian Bronzes. Eötvös University Press.- Eötvös Loránd University, Budapest, 2021.
7. **Tarontsi S.** The Journal of International Amisos (Uluslararsı Amisos dergisi), Sacred Animals and Fantastic Creatures of Urartian – Mythological Reflections of Urartian Civilization. -December 2017.- Vol. 2, issue 3. -P. 127-145.

Հավելված

Նկ. 1



Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

А.А. АМАЯКЯН, Т.Т. ПОГОСЯН

ИССЛЕДОВАНИЕ УРАРТСКОЙ МЕБЕЛИ И ПРЕДЛОЖЕНИЕ О ВОЗМОЖНЫХ ВАРИАНТОВ ЕЕ ИСПОЛЬЗОВАНИЯ В СОВРЕМЕННЫХ ИНТЕРЬЕРАХ

Цель статьи – представление особенностей урартской мебели, ее основные типы, используемые материалы, технические особенности ее изготовления. В результате проведенных исследований предложены возможные варианты использования урартской мебели в современных интерьерах путем изучения научных публикаций и изображений урартской мебели.

Ключевые слова: мебель, деревообработка, урартский, ремесла, табуретка, тахта.

H.H. HMAYAKYAN, T.T. POGHOSYAN

STUDYING URARTIAN FURNITURE AND PROPOSALS FOR ITS POSSIBLE USE IN MODERN INTERIORS

The article aims to study the characteristics of Urartian furniture, including its main types, the materials used in its production, and the technical aspects of its craftsmanship. By analyzing scientific publications and visual materials on Urartian furniture, the study seeks to propose possible ways to incorporate it into modern interiors.

Keywords: Furniture, Woodworking, Urartian, Crafts, Tabouret, Sofa.

ՀՏԴ 72.012.8 (479.25)

Ժ.Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԻՆՏԵՐԻԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՃԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՎ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՆԹՐԻ ՈՃԻ ՀԵՏ

Հետազոտվել են ինտերիերի հայկական ոճի ձևավորման պատմական և հայեցակարգային մոտեցումների ընդհանրությունները միջազգային ճանաչում վայելող քանթրի ոճի հետ:

Հայկական քաղաքային և գյուղական տների ինտերիերներն ունեն ցայտուն առանձնահատկություններ, որոնք այս կամ այն չափով նույնական են: Այժմ տարբեր երկրների քաղաքային արվարձաններում կամ գյուղական ավաններում մեծ տարածում ունի քանթրի ոճը:

Վերլուծությունը հնարավորություն է ընձեռում՝ հասկանալու վերջին տարիներին ՀՀ-ում առանձնատների և բնակարանների ինտերիերի ձևավորման գործընթացում քանթրի ոճի կիրառության ընդլայնման պատճառները: Համալիր վերլուծությունները միտված են բացահայտելու ինտերիերի հայկական ոճի հստակ ոճային կանոնների մշակմանը և տարբերակիչ առանձնահատկությունների ամրապնդմանը, ինչպես նաև վերջինիս ձևավորմանը որպես էթնիկ ոճ:

Առանցքային բառեր. ինտերիերի հայկական ոճ, վերլուծություն, քանթրի ոճ, հայկական ոճի հայեցակարգ, էթնիկ ոճ, էկլեկտիկա:

Հետազոտության առարկա են ՀՀ-ում առանձնատների և բնակարանների ինտերիերի ձևավորման գործընթացում քանթրի ոճի կիրառության ընդլայնման պատճառները և գյուղական ու քաղաքային միջավայրերում ինտերիերների հայկական ոճի ընդհանրությունները քանթրի ոճի հետ: Ուսումնասիրության արդյունքում համալիր կերպով ներկայացվում են պատմական տարբեր ժամանակաշրջաններից մեզ հասած մանրամասների ուսումնասիրությունները և համեմատական